ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Տնօրեն _____
«31» 08 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Վանաձորի նորմալ, քաղաքի Արարատի
հ.5 միջնակարգ դպրոց
ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Ստեփանյան Արմենուհի Գարեգինի
դասղեկի ազգանունը , անունը, հայրանունը

<< 2022 23 >> ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքային պլան
2022-2023 ուս տարի

Սիսիանի հ 5 հիմնական
դպրոց 6- րդ դասարան

Դասղեկ՝ Ա. Վարդանյան

Աշակերտի ազգանուն անուն	Ծննդյան տարին, ամիսը, օրը	Բակության հասցե	Ծնողի մասին տվյալներ
Աբրահամյան Իրինա Արտեմի	2011-05-25		
Բախշյան Մարիամ Անանայայի	2010-12-20		
Դավթյան Սաթինե Գևորգի	2011-08-24		
Եփրեմյան Դիանա Տիգրանի	2011-07-18		
Զաքարյան Լևոն Արմենի	2011-05-17		
Իշխաքնյան Էլինա Միհերի	2010-07-27		
Հայրապետյան Հասմիկ Հովսեփի	2011-03-31		
Հայրապետյան Մարի Արտակի	2011-07-23		
Հովսեփյան Նարեկ Մանվելի	2011-06-28		
Ղազարյան Մարիամ Արամի	2010-10-10		
Միքայելյան Վաչագան Միսակի	2011-10-03		
Մուսիկյան Զարուհի Կարենի	2011-06-08		
Մկրտչյան Նարեկ Արմենի	2011-12-28		
Մնացականյան Համլետ Արմենի	2011-09-30		
Մնացականյան Հասմիկ Մանվելի	2011-06-09		
Շահբազյան Միլենա Արտեմի	2011-01-27		

Սարգսյան Հայկ Սամվելի	2010-02-16		
Քարամյան Սոֆի Արմենի	2011-09-15		
Օհանջանյան Ալեն Արմենի	2011-12-05		

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)6-րդ դասարանում սովորում են 19աշակերտ՝12 աղջիկ և 7տղա:Դասարանում ձևավորված է առողջ կոլեկտիվ,որի շնորհիվ
յուրաքանչյուր ոք ձգտում է իր հաջողություններով ուրախացնել կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ:Ընդհանուր առմամբ 6-րդ դասարանի աշակերտները կազմակերպված են,ընկերասեր,ազնիվ,պարտաճանաչ:Դասապրոցեսին ցուցաբերում են ակտիվություն ,ունեն պատշաճ վերաբերմունք բոլորի հանդեպ:
2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացում ներկայացվում է միջոցառումների օրացույցային պլանի աղյուսակ:Պետք է իրականացվի հայեցի,գեղագիտական,բարոյական,հայրենասիրական,սպորտային,քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ,բաց դասեր ,սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ,աշակերտների հայացքների,մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր:Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է,որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,ինքնուրույնության նախաձեռնում,հանդուրժողականության արտահայտում:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց:Հայրենիքը սկսվում է տնից,հողից,ջրից:Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն,մեր ավանդույթներն ու սովորույթները,երգն ու պարը,մշակույթը,ազգային նվաճումները,հայտնագործությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողների համատեղ գործունեության գործընթաց է,որը ձևավովորում է գեղագիտական կուլտուրա:Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը,էքսկուրսիաները և այլն:

3.3 Ռազմա-հայրնասիրական դաստիարակություն- Հայրենասիությունը դա սերն է հայրենիքի,սեփական երկրի նկատմամբ:Դա հոգատարությունն է հայրենիքի հանդեպ և հանուն հայրենիքի սեփական անձի զոհողությունն է:Պետք է հարգել և սիրել մեր հայրենիքը:

3.4 Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական ու ֆունկցիոնալ կատարելագործմանը,արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը,հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը:Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները,կարողությունները և հմտությունները և հմտությունները:

3.6 Բնապահպանական դաստիարակության նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է:Պետք է անձի մեջ դաստիարակել,որ բնությունը ազգային հասարակական հարստություն է,որը պետք է պահպանել խնամքով:

4.Դպրոց- ընտանիք կապը ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից:Այդ համատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում:Ծնողներին պետք է ներգրավել դպրոցական աշխատանքների կատարմանն ու կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1.	Կարգապահություն	02.09.2022թ.	դասղեկ
2.	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում	09. 09.2022թ.	դասղեկ
3.	Ճշմարտություն և խաբեբայություն	16.09.2022թ.	դասղեկ
4.	Համարձակություն	23.09.2022թ.	դասղեկ
5.	Ք/պ Հնարավոր բնական աղետների կանխարգելման նպատակով իրականացվող հիմնական միջոցառումները	30.09.2022թ.	դասղեկ
6.	Իմ սիրելի հերոսը	07.10.2022թ.	դասղեկ
7.	Բարեկամությունը սկսվում է ժպիտից	14.10.2022թ.	դասղեկ
8.	Իմ տունը իմ հայրենիքն է	21.10.2022թ.	դասղեկ
9.	Ք/պ Տվյալ բնակավայրում,տարածքում հնարավոր բնական աղետները	04.11.2022թ.	դասղեկ
10.	Մեր ընտանիքը	11.11.2022թ.	դասղեկ
11.	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը	18.11.2022թ.	դասղեկ
12.	Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը	25.11.2022թ.	դասղեկ
13.	Ք/պ Տվյալ բնակավայրում,տարածքում հնարավոր բնական աղետները	02.12.2022թ.	դասղեկ
14.	Կարելի է և չի կարելի	09.12.2022թ.	դասղեկ
15.	Հայկական ազգային երգեր	16.12.2022թ.	դասղեկ
16.	Ք/պ << Բնական աղետներ, ինչ է երկրաշարժը>> <<Հայկական լեռնաշխարհի անցյալում տեղի ունեցած երկրաշարժերը>> և <<Անհրաժեշտ գիտելիքների երկրաշարժից պաշտպանվելու համար>>	23.12.2022թ.	դասղեկ
17.	Մեր երկրին հերոսական անցյալը	13.01.2023թ.	դասղեկ
18.	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը	20.01.2023թ.	դասղեկ
19.	Ք/պ Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգը,խնդիրները	27.01.2023թ.	դասղեկ
20.	Ազատամարտի հերոսները	03.02.2023թ.	դասղեկ
21.	Ինչպես գեղեցիկ և ճաշակով հագնվել	10.02.2023թ.	դասղեկ

22.	Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը	17.02.2023թ.	դասղեկ
23.	Ո՞վ է ընկերը	24.02.2023թ.	դասղեկ
24.	Ք/պ Աշակերտների գործողությունները հնարավոր բնական աղետների ժամանակ	03.03.2023թ.	դասղեկ
25.	Ժպիտը մարդու կյանքում	10.03.2023թ.	դասղեկ
26.	Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է թե վատ	17.03.2023թ.	դասղեկ
27.	Ք/պ << Բնական աղետներ, ինչ է երկրաշարժը>> <<Հայկական լեռնաշխարհի անցյալում տեղի ունեցած երկրաշարժերը>> և <<Անհրաժեշտ գիտելիքների երկրաշարժից պաշտպանվելու համար>>	24.03.2023թ.	դասղեկ
28.	Ինչպես գեղեցիկ և ճաշակով հագնվել	07.04.2023թ.	դասղեկ
29.	Երբ մեծանամ	14.04.2023թ.	դասղեկ
30.	Քաղաքավարության կանոնները	21.04.2023թ.	դասղեկ
31.	Հարգանքը մեծերի նկատմամբ	28.04.2023թ.	դասղեկ
32.	Ք/պ Աշակերտների գործողությունները հնարավոր բնական աղետների ժամանակ	05.05.2023թ.	դասղեկ
33.	Գյուղ կանգնի, գերան կոտրի	12.05.2023թ.	դասղեկ
34.	Հաղթում է նա, ով չի հանձնվում	19.05.2023թ.	դասղեկ

Դասղեկի աշխատանքի բնույթը, մանկավարժական գործառույթները, նպատակը և աշխատանքի ուղղությունները

Դասղեկները դասարանի հետ հիմնական աշխատանք վարողներն են: Գործունեության շրջանակընենթադրում է հետևյալ աշխատանքները.

1. Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում՝

1) հետևում է աշակերտների հաճախելիությանը (մատյանում նշում բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի),

2) աշխատում է առարկայական ուսուցիչների հետ՝ առաջադիմության բարձրացման ուղղությամբ (պարբերաբար ստուգում է օրագրերը, վերլուծում է ընթացիկ և վերջնական գնահատականները)

3) հետևում է աշակերտների կարգապահությանը:

2. Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝

1)կազմակերպում է դասարանական ժողովներ,

2) կազամկերպում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,

3) կազմակերպում է այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ

3. Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:

4. Աշխատանք սովորողների ծնողների հետ՝

1) ծնողներից ակնկալում է, որ հետևեն երեխայի առաջադիմությանը,

2) ծնողների հետ անհատական զրույցներ է ունենում,

3) ծնողական ժողովներ է կազմակերպում:

5. Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին՝

1)ծանոթանում է սովորողների ընտանիքի կազմին,

2)նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին

3)բարոյահոգեբանական պայմաններին

6. Թղթավարություն՝

1) ամփոփում է աշակերտների առաջադիմության տվյալները,

2) լրացնում է դասամատյանը,

3) լրացնում է անձնական գործերը,

4) մշակում է դասղեկի աշխատանքային պլան:

7 Աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների խորացման ուղղությամբ:

Դասղեկական ժամի դաստիարակչական Գործառույթները

Դասղեկական ժամը աշակերտների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից մեկն է: Այն ներառվում է դասացուցակի մեջ և անց է կացվում յուրաքանչյուր շաբաթ՝ որոշակի օր:

Դասղեկական ժամի ձևերը տարբեր են. դասախոսություն, զրույց, բանավեճ, վիկտորինա, մրցույթ, խաղ, կոնֆերենս, հեռակա ճանապարհորդություն, տոն և այլն:

Դասղեկական ժամը կատարում է հետևյալ դաստիարակչական ֆունկցիաները. կրթական, կողմնորոշման, ուղղորդման և ձևավորման:

Կրթական ֆունկցիա - կարևորվում է նրանով, որ դասղեկի ժամը ընդլայնում է աշակերտների գիտելիքների շրջանակը: Դասղեկական ժամի առարկա կարող է հանդիսանալ գիտությունների տարբեր ոլորտներից բերված տեղեկություններ, սոցիալական կյանքի երևույթներ, երեխաների հոգեբանական խնդիրներ:

Կողմնորոշող ֆունկցիա - նպաստում է իրադարձություններին և երևույթներին բարոյական գնահատական տալու ժամանակ՝ հենվելով բարոյական և հոգևոր արժեքների վրա, աշակերտների մոտ աշխարհի հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Հաճախ դասղեկական ժամերը օգնում են աշակերտներին կողմնորոշվել հասարակական արժեքների մեջ:

Ուղղորդող ֆունկցիա - դասղեկի ժամի այս ֆունկցիան նախատեսում է աշակերտների գործունեության կազմակերպում, ազդելով նրանց վարքագծի վրա, որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքի:

Ձևավորող ֆունկցիա - արտահայտվում է աշակերտների մոտ իրենց արարքների և իրենք իրենց գնահատելու կարողության ձևավորման մեջ, օգնում է վարել երկխոսություն,շարադրել փաստերով, արտահայտել սեփական կարծիքը:

Հաճախ դասղեկի ժամը միաժամանակ կատարում է նշված բոլոր չորս ֆունկցիաները. այն և՝ կրթում, և՝ կողմնորոշում, և՝ ուղղորդում, և՝ ձևավորում է աշակերտներին: Այս ֆունկցիաները, հնարավորինս պետք է արտացոլվեն դաստիարակչական միջոցառման նպատակի ձևակերպման մեջ:

Դասղեկի ժամերի թեմատիկան տարբեր է: Դասղեկի ժամերը կարող են նվիրվել.

- բարոյաէթիկական
- գիտության և իմացության
- գեղագիտական
- պետության և իրավունքի
- հիգենայի և առողջ ապրելակերպի
- հոգեբանական
- բնապահպանական
- համադպրոցական /կարևոր հասարակական իրադարձությունների, տոնական օրերի/ խնդիրների:

Դասղեկի խնդիրը – ստեղծել մանկավարժական տարածք երեխայի ինքնության զարգացման, նրա ներաշխարհի հարստացման համար:
Լավ է, երբ երեխաների հետ շփվելիս դաստիարակը կառաջնորդվի յուրահատուկ կանոնակարգով, որը իր մեջ ներառում է այսպիսի կանոններ.

- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել
- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել
- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնել դրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե նրանց փոխարեն
- Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանք իրենց և մյուսների նկատմամբ:

Դասղեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է: Միշտ պետք է զբաղվել երեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն, արդյունքը երկար սպասել չի տա:

Քննարկվող հարցեր		Ամիս, ամսաթիվ
1.	.Դասարանական ծնողական խորհրդի ընտրություն: .Կարգապահական հարցերի քննարկում: .Հակահամաճարակային կանոնների պահպանման հետ կապված հարցերի քննարկում:	
2.	.Ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում:Ընթացիկ հարցեր	
3.	1. Կարգապահական հարցերի քննարկում 2.Ուսման առաջադիմության և բացակայությունների հետ կապված հարցերի քննարկում 3.Պատմամշակութային էքսկուրսիայի կազմակերպում 4. Ընթացիկ հարցեր	
4.	1.2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներիամփոփում 2. Ընթացիկ հարցեր	